

## Ամենամյա ուսանողական բիզնես մրցույթ CaseKey-ն մեկնարկել է

CaseKey բիզնես խնդիրների լուծման մրցույթի [2022 թվականի հայտերն արդեն բաց են](#): Միջազգային ֆորմատով մրցույթը Հայաստանում կանցկացվի 2-րդ անգամ՝ այս անգամ ներգրավելով ավելի շատ շահառուներին:



Մրցույթի նպատակը ուսանողներին հնարավորություն տալն է կիրառել իրենց ստացած բիզնես գիտելիքները իրական բիզնեսներին լուծումներ առաջարկելու նպատակով: Ըստ ֆորմատի՝ 5 ամսյա կրթական ծրագրից հետո մասնակից թիմերը ստանում են հատուկ մրցույթի համար մշակված իրական բիզնես խնդիր, որից հետո ունենում 72 ժամ այն լուծելու համար:

2021թ-ին կայացած միջոցառումը Հայաստանում առաջին բիզնես խնդիրների լուծման մրցույթն էր, որն իրականացվեց ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ: 2021թ.-ի մրցույթից հետո մասնակից մեկ թիմ հրավեր է ստացել ներկայացնել Հայաստանը ԱՄՆ Ֆլորիդա նահանգում այս տարվա մարտի 20-26-ին կայացող միջազգային մրցույթում:

[Անցյալ տարի մրցույթը](#) ստացել է ավելի քան 300 անհատների և 20 թիմերի հայտեր, որոնցից ընտրվել են շուրջ 30%-ը: Մասնակիցները ստացան հնարավորություն հանդիպել հայկական բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ, ստեղծել գործարար կապեր և շատ դեպքերում ստանալ աշխատանքային հրավերներ: Հաղթող թիմը նաև ստացավ 3000 ԱՄՆ դոլար մրցանակ, որը կարող է ուղղվել կրթական միջոցառումներին մասնակցելուն:

2022թ-ի CaseKey բիզնես խնդիրների լուծման մրցույթի հայտերն արդեն բաց են: Մրցույթին կարող են դիմել 17-25 տարեկան դպրոցականները, ուսանողները և նորավարտները՝ ինչպես անհատապես, այնպես էլ թիմերով: Դիմումների ընդունման ավարտից հետո մասնակիցները կբաժանվեն թիմերի և նրանց կկցվեն բոուլշեր, ովքեր պարբերաբար կրթական հանդիպումներ կունենան մասնակիցների հետ, որպեսզի պատրաստեն նրանց իրական խնդրի լուծմանը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը մարտի 27-ն է, դիմումները հասանելի են այստեղ՝ <https://nationinaction.com/bcc2022-apply-as-a-participant/>:

Մրցույթի մասին նորություններին կարող եք հետևյալ [Ֆեյսբուքյան էջի](#) միջոցով: